

Cleveland



# Diocese of the Armenian Church of North America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ MURRAY HILL 6-0710

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Առաջնորդ

Archbishop Sion Manogian  
Primate

Թիւ 1948  
Մարտ 3, 1961

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ՁԸՆՅ. Գասպարեան  
Այցելու Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի  
Գլխավէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք 1961, Փետրուար 22 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 19ին գումարուած Գլխավէնտի Համայնքին Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Եկեղեցւոյ Նախանձախնդիր ու Նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր Համայնքի Ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին:—

- Տիարք՝ Տօրթ. Գեղամ Կէօրճեան
- Գէորգ Արսլանեան
- Նուպար Ապտալեան
- Արմէն Գասպաշեան
- Ալեքս Գաղտասարեան /մէկ տարուան համար/
- Օր. Ռոզ Ազարեան /մէկ տարուան համար/

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արգիւնաւոր գործունէութիւն, ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ ու ի շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Ազօթաբար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի